

# ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄ

(Моленіе о чашѣ)

Ն Ի Կ Ի Տ Ի Ն Ի Ց

Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՛ անկաւ ՚ի վերայ  
երեսաց իւրոց, կաց յաղօթու և առէ. չայր իմ, եթէ  
հնար է՛ անցցէ բաժակս այս լինէն, բայց ոչ որպէս  
ես կամիմ, այլ որպէս Դու:

Մատթէոս, գլ. իշ. Էջ 60.

Ահա արեւմուտն Հըրէաստանի  
Ոսկեվառւում է՝ կրակած հորիզոն,  
Եւ շուրջ թափանցիկ մէգ-մառախուղի  
Շըզարշ ծաւալում նիրհուն երեկոն:  
Եւ վերջալուսի շողերով վառուած՝  
Վեր է ամբառնում վառահեղ, անխոռվ,  
Դաշտերի գողից լեառը Զիթենեաց  
Իւր անուշաբոյր, ճոխ այդիներով՝  
Եւ փայլվըլում են նըրա չորս բոլոր  
Կենդանանըկար, թովի՛ զ պատկերներ—  
Այստեղ պսակում են լեռ, հովիտ ու ձոր  
Երուսաղէմի հոյակապ շէնքեր:  
Դէպի արեւելք—Յորդանան սահուն,  
Դաբաղ, Դարազին լեռները հեռւում,  
Շուրջը հովիտներ թաւշապատ, նիրհուն

Պատկերանում են մըշուշի միջում։  
 Եւ Մեռեալ ծովը՝ ասես խոր քընում  
 իւր յըստակ փայլով երկինք է նայում.  
 Իսկ այնտեղ, հեռուն, գէպի արեւմուտ,  
 Միջերկրականի լազուր ալիքներ  
 Անդօր քերում են ափերն աւազուտ,  
 Լայնաձեռ ափեր, որպէս պարփսպներ...  
 Մթնում է... չորս կողմն հանգիւստ է խորին...  
 Գիշերն իւր ցոլուն աստղերն է վառում,  
 Եւ Գեթսեմանի պարտէզն այդ ժամին  
 Լիալուսինն է վառ լուսաւորում։  
 Եւ այնտեղ թաւշեայ դալարի վերայ,  
 Անուշ հովանում ձիթենիների՝  
 Երեք առաքեալ քընած են ահա—  
 Երեքն էլ թարգման Տիրոջ պատուէրի.  
 Եւ նրաց նինջը քաղցր է ու անդո՞րր։  
 Բայց ժանտ աշխարհն էր անսթափ քընած։  
 Անցեալի մեղքն էր, մեղքը դարաւոր  
 Սերոնդից—սերունդ նըրան կաշկանդավ։  
 Եւ որպէս մի բիծ անփառք դոյլութեան՝  
 Կըրում էր աշխարհն անէծք նախահօր.  
 Ամեն դար իր հետ բերում էր նրան  
 Խոցող վէրքի պէս չարիք նորանոր...  
 Եւ Ուսուցիչն էր միայն այդ ժամին  
 Արթուն ու ըզգաստ ամըողջ աշխարհում.  
 Անհաղորդ հանուր մեղքին ու չարին՝  
 Մարդկային անշուք վիճակն էր խորհում։  
 Եւ նա անձնուէր վեհ ճըմարտութեան՝  
 Նախատեմնում էր խան ու Գողգոթան.  
 Եւ սըրտում վըշտի յուղմունք ու ցասում,  
 Հօրն էր մենամենակ Որդին աղերսում.  
 «Ո՞հ, Հայր իմ, Հայր իմ, անմըռունչ թախծից  
 Ես տառապում եմ, հոգիս նուազում,  
 Եւ դալիք օրուան տըխուր պատկերից  
 Իմ ճընշուած սըրտից արիւն է հեղում։

Ես գիտեմ, այդ օրն կը գայ անկասկած,  
 Եւ Աստուածորդին ողջակէզ դարձած՝  
 Ամբոխի ձեռքով կը մատնուի մահուան՝  
 Ազատ կեանք տալով համայն մարդկութեան...  
 Եւ թագապեսակ, տիրական գըլիխ  
 կը թընդայ անէծք վայրագ խուժանի.  
 Նա անարգելով սուրբ գործը Զոհիս՝  
 Այդ գործը թունոտ ծաղրի կը հանի.  
 Եւ նոքա, որոնց խաչիս վերայից  
 Սիրոյ, օրհնութեան շընորհ կ'առաքեմ,  
 Նոքա չարախինդ, հրպարտ, ոխալից՝  
 Զեռք կը բարձրացնեն իրանց Փըրկչի դէմ...  
 Ո՞հ, Հայր իմ, Հայր իմ, անցցէ այս բաժակ,  
 Դառն է ինձ համար տեսնել, թէ ինչպէս  
 Զարիք է գործում աշխարհ սանձարձակ,  
 Իր մօտ փըրկութեան կոյր հանդիսատես։  
 Բայց եթէ, Հայր իմ, Քո ժողովը բորդին  
 Փառք պիտի բերէ իմ անարագութիւն,  
 Փոյթ չէ, մահանայ թնդ Մարդոյ Որդին՝  
 Հանուրին բաշխած սուրբ աղատութիւն։  
 Ազօթքն աւարտած, տըխուր, վըշտագին  
 Մօտեցաւ Քրիստոս աշակերտներին  
 Եւ նրանց անդորր նիրհը տեսնելով  
 Դարձաւ ու ասաց. «Վէր կացէք շուտով,  
 Հասել է ժամը, շնուր ազօթք արէք,  
 Որ անփորձ մընաք, չը գայթակուէք,  
 Որ ձեր սըրտերում հաւատն ամրացած՝  
 Հաւատով ելնէք փորձանքի դիմաց»։  
 Ասաց և հանդարտ հեռացաւ կըրկին  
 Այնտեղ, ուր առաջ նա արտասւում էր,  
 Եւ մի նոր վըշտով համակուած հոգին,  
 Նա ծունկ խոնարհեց և ազօթում էր.  
 «Հայր իմ, Դու աշխարհ ինձ չէ ընդունում։  
 Բայց ահա աշխարհն ինձ չէ ընդունում։  
 Սէր քարոզեցի նորան անձանձիր,

Բայց նա բարբառիս ականջ չէ դընում.  
 Ես բուժում էի հէտ հիւանդներին,  
 Թընամիներիս համար աղօթում.  
 Եւ ինձ խաբեբայ կոչած՝ իմ գըլլսին  
 Երուսաղէմի էր ու լուտանք թափում:  
 Ես մարդկանց խաղաղ կեանք աւանդեցի, —  
 Մարդիկ դատով են Անպարտիս սաստում.  
 Ես մեռեաներին կեանքի կոչեցի, —  
 Աշխարհն ինձ համար խաչ է պատրաստում...  
 Ո՞հ, Հայր իմ, Հայր իմ, լըսէ իմ խընդրուած,  
 Սնցցէ ինձանից այս դառըն բաժակ.  
 Դու լուսոյ ըսկիզը, Դու սիրոյ Աստուած,  
 Դու ես եւ հըզօր, եւ կարող միակ:  
 Բայց թէ որ պէտք է իմ արեան գընով  
 Մեղսալից երկիրն հաշտուէ երկնի հետ,  
 Ես խաչ հանուելու պատրաստ եմ սիրով,  
 Թող օրհնեալ լինի Քո կամքը յաւէտ»:  
 Եւ մի լուռ թախիծ սըրտում թագուցած՝  
 Մօտեցաւ գարձեալ երկրորդ անդամը  
 Աշակերտներին անխըռով նիրհած  
 Եւ ասաց. «Ելէք, հասել է ժամը.  
 Հեռու չէ արդէն փառքի յաղթանակ,  
 Անհաշտ խաւարի և լուսոյ մըրցում:  
 Աղօթէք — շուտով երկրի դառն վիճակ  
 Այս արեան օրը կը ստանայ լուծում»:  
 Ասաց և նորից նա մեկուսացած  
 Չիթենիների անդորր հովանում  
 Սկսեց տըրտմիլ և ծունկ խոնարհած՝  
 Դարձեալ լալիս էր ու աղօթք անում:  
 «Ո՞հ, Հայր իմ, Հայր իմ, ծանր է իմ վիճակ,  
 Միտքըս վարանում, միտքըս մըթնանում,  
 Մարդկային աղդի չարութիւնն համակ  
 Որդուդ վերայ է միայն ծանրանում:  
 Մարդկութեան արատ, դարերի ամօթ —  
 Ո՞Շը տանելու հոգիս է յօժար,

Բայց իբրև ես մարդ՝ ոյժի եմ կարօտ,  
Ընկճռում, լըքում է մարմինը տըկար...  
Հայր իմ, առաքիր քըրիկութիւն ազգիդ,  
Տնւր կարող ինձ ոյժ սըխրագործութեան,  
Եւ ուրախ ոըրտով կը մնոնէ Որդիդ,  
Ուպէս մի Մեծ Զոհ հանուր հաշտութեան....»  
Եւ նա ընկըլմուեց ջերմ աղօթքներում՝  
Զեռքերն ու հայեցքն ամբարձած երկինք...  
Տառապման հուրն էր նորա դէմքն այրում,  
Այտերից արեան թորում էր քըրտինք:

Եւ ահա յանկարծ փայլով եղեմի  
իջաւ երկնքից անամպ, լուսաւոր  
Մունետիկն Աստծոյ սուրբ հըրաշքների՝  
Փըրկչի աղօթած վայրը մենաւոր:  
Հայեցքը չըքնաղ, թովի՛չ ու հեղի՛կ,  
Անյայդ, լուսաշող ճակատի վերան  
Ոգեռութեան դրոշմուած էր կընիք,  
Եւ դէմքն էր վառւում տօթ օրուայ նըման:  
Եւ նա Տիրոջ մօտ կանգնեց քով ի քով  
Եւ ոգեռորիչ, երկնաշունչ խօսքով  
Խըրախուսում էր արարաշխարհի  
Ազատչին դէսլ գործ վլսեմ, քաջարի՛:  
Եւ ինքն էլ նըման թեթև ըստուերին,  
Բայց լեցուն անհուն, երկնատուր չնորհքով,  
Գետին խոնարհեց ծունկերն օգային  
Եւ աղօթում էր մի ջերմ աղօթքով:

Այդ պահուն երկիրն ընկըլմուած խոր քուն,  
Անդորրութիւն էր երկնի վրայ տիրում:  
Եւ սատանան էր միայն ապարդիւն  
Տառապում մենակ իշխող խաւարում:  
Նա գիտէր, որ իւր չար իշխանութեան  
Կուռքն է երերում և մօտ է անկման,  
Որ արդէն մեղսոտ աշխարհի համար

Թագ է պատրաստւում և խաչ լուսավառ.  
Նա հասկանում էր—ինչու քըրտնաթոր  
Այն մեծ Սնապարտն է աղօթում մենակ.  
Եւ խաւար ոգին ողբում էր անդօր  
Լուսառազ Տիրող փառքի յաղթանակ։

Փայլում էր լուսին, Երկնակեաց ոգին  
Ամպերի վրայով շտապում էր եղեմ.  
Եւ Ազատիչը մօտեցաւ կըրկին  
Աշակերտներին։ Օ՛, որքան վլսեմ,  
Ո՞րքան ազդու էր նա այդ ժամանակ.  
Ոգեսորութեան որպիսի կըրակ  
Այդ սուրբ վայրկեանին շողում էր նորա  
Չըքնաղ, լուսազարդ պատկերի վերայ,  
Ո՞րպիսի պայծառ ցոլում էր վայլով  
Ո՞ղջ կամքը նորա խորունկ աչերից.  
Հիանում էին աստղեր նորանով  
Կէս-գիշերային գունատ երկնքից։  
Եւ Ուսուցիչը դարձաւ իր նիրհած  
Աշակերտներին ու դարձեալ ասաց.  
«Ելք, մերձ է օրն վրշտի, տըրտմութեան,  
Եւ ժամն է հասել անարդ մատնութեան։»  
Եւ խուլ շաշիւնից սուր-սուսերների  
Նիրհուն պարտէղը իսկոյն ըսթափուեց,  
Եւ չարագուշակ ցոլքում ջահերի  
Մատնիչ Յուդայի չար դէմքը վայլեց...

Թարգմ. Ա.Լ. ՇԱՏՈՒՐԵԱՆ